# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի  Մ Ա Ր Զ Պ Ե Տ

## ՈՐՈՇՈՒՄ

«27» մարտի 2026թ. N ՄՈ/173-Ա

ք. Արմավիր

### ԱՐՄԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ «ՓՇԱՏԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 69-րդ կետով, հիմք ընդունելով «Փշատավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նելլի Ղորղանյանի 2026 թվականի մարտի 26-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ  ե մ՝**

1. «Փշատավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նելլի Ղորղանյանի բացակայության ընթացքում «Փշատավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Փշատավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Արմինե Դանիելյանին՝ մինչև հիմքի վերացումը:
2. «Փշատավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարման ընթացքում Արմինե Դանիելյանի աշխատանավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ